

ԻՐՆ ԽՈՐԴԱԴՐԵՂ

ԳԻՐՔ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՈՒ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ (ՔԻՏԱՐ ԱՆ-ՄԱՍԱԼԻՔ ՈՒԱ ԱՆ-ՄԱՄԱԼԻՔ)

[ՆԵՐԱՄՈՒԹՅՈՒՆ]

ԼՁ 3 - 5

Թող Ալլահը քո կյանքը երկարեցնի, ով որդիդ ազնվական տներին և առաքինի տիրակալների, որոնք կրոնի փարոսներ և բոլոր արա-րածների մեջ Ալլահի ընտրյալներ են եղել: Թող Ալլահը քո երջան-կությունը տևական դարձնի և բարիքները քեզ համար բազմացնի. Թող օգնի քեզ քայլելու բարեգործության ուղիով, քեզ դասելով այն-պիսիների մեջ, որոնց գործերին հավանություն է տալիս և նրանց կյանքը դարդարում է:

Հասկացա թե ինչ ես հարցնում. Թող Ալլահը քեզ հասկանալի դարձնի բոլոր լավ արարքները, երջանկացնի քեզ մինչև մահվան օրը, գործերիդ հաջողություն և քեզ լավ բաժին տա թե այս աշխարհում, թե հանդերձյալ կյանքում:

Կամենում ես, որ տամ հստակ նկարագրությունը երկրի ճանա-պարհների ու թաղավորությունների, հեռավորությունը և մերձավո-րությունը, շեն հողերը և անապատները, ցույց տամ երկարություն-ները, ճանապարհները, հարկերը, սահմանները, ինչպես ցույց են տվել հները:

Գտել եմ, որ Պտղոմեոսը բացահայտել է [երկրի] սահմանները և ապացույցներով պարզաբանել նկարագրությունը օտար լեզվով և ես նրա լեզվից թարգմանեցի ճիշտ (արաբերեն) լեզվի, որպեսզի վերա-հասու լինես: Ապա ես ինքս եմ հորինել, կատարելու համար քո ցան-կություններն ու կամքը և հուսով եմ, որ համապատասխանելու է քո պահանջին, գոհացնելու է քո նպատակները, այնպես որ դու հնա-րավորություն ունենաս ճանաչելու թե՛ մերձավորը, թե՛ հեռավորը, սևփական աչքով տեսածի նման:

Գրել եմ մի դիրք և սկսում եմ փառաբանելով Ալլահին, որն ամե-նատերն է և ամենայն բարիքների աղբյուրը, ստեղծել է մարդկանց իր կամքով և ցույց է տվել ծառաներին ճշմարտության ուղին և որի արարչագործության մեջ ոչ սխալ կարծիքներն են ղեր կատարել, ոչ

էլ Երևութական դատողութիւնները:

Այս գրքում կա Երկրի նկարագրութիւնը և նրա վրա ապրող արա-
րածների վիճակը, ամեն մի Երկրի կիբլան¹, Թագավորութիւններն ու
ճանապարհները մինչև աշխարհի տարբեր ծայրերը, որի Հեղինակն է
Աբու-լ-Կասիմ Ուբայդալլահ իբն Աբդալլահ իբն Նորզադրէն (Նուր-
դադրաւ), Հավատացելոց իշխանի՝ (սալիֆա) մատուան:

Ասել է Աբու-լ-Կասիմը, որ Երկրի ձևը կլոր է դնդի նման, դրված է
տիեզերքի մէջ՝ ինչպես դեղնուցը ձվի մէջ: Օղբ պատում է Երկիրը և
ձգում է նրան ամեն կողմից դեպի տիեզերքը (երկինքը): Արարածները
Երկրի վրա կայուն վիճակում են, քանզի օդը ձգում է նրանց մար-
միններում ևղած թեթև մասերը, իսկ Երկիրը ձգում է դեպի իր
կենտրոնը նրանց ծանր մասերը: Երկիրը նման է [մագնիսական]
քարին, որը ձգում է Երկիրը:

Երկիրը երկու մասերից է բաղկացած, որոնց միջև Հասարակած
գիծն է և երկարում է արևելքից արևմուտք և սա Երկրի երկարու-
թիւնն է: Ամենամեծ գիծն է երկրագնդի վրա, ինչպես որ կենդանա-
կերպ (զոդիակ) գիծը տիեզերքի ամենամեծ գիծն է: Երկրի լայնու-
թիւնը ձգվում է Հարավային բևեռից, ուր նրա շուրջը պտտվում է
Ողնուց (Կանոպուս, Սուհայլ) Համաստեղութիւնը³, մինչև Հյուսիսային
բևեռը, որի շուրջը պտտվում է Մեծ արջի (բանատ նաչ) Համաստե-
ղութիւնը:

Երկրի շրջանակը Հասարակածում երեք Հարյուր վաթսուսն աստի-
ճան է, մեկ աստիճանը Հինգ փարսալս է, փարսալսը տասներկու Հա-
զար կանգուն⁴ (գիրա, արմնկաչափ) է. կանգունը քսան մատնաչափ
է, մատնաչափը դարու վեց Հատիկ (Հարբա) է, չարված ամեն մեկը
մյուսի կողքին ըստ Հաստութեան: [Երկրի] շրջագիծը ինը Հազար
փարսալս է:

Հասարակածի և ամեն մի բևեռի միջև իննսուն աստղագիտական
աստիճան կա, իսկ լայնութեան շրջանակը երկարութեան նման է,
միայն թե Երկրի վրա բնակելի է Հասարակածից մինչև քսանչորս
աստիճանը, որից Հետո մնացածը ողողել է Մեծ ծովը⁵:

Այսպիսով մենք ապրում ենք Երկրի Հյուսիսային քառորդում, իսկ
Հարավային քառորդը ավերակ (անապատ) է շողի սաստկութեան
պատճառով, իսկ Երկրի մեր տակի կեսն անբնակ է: Թե՛ Հյուսիսի, թե՛
Հարավի ամեն մի քառորդը յոթ կլիմաներից (գոտիներից) է
բաղկացած: Պտղոմէոսն իր գրքում Հիշել է, որ իր ժամանակ Երկրի
քաղաքները չորս Հազար երկու Հարյուր էին:

ԼՁ 5

Հայաստանի, Ատրպատականի, Բաղդադի, Վասիթի, Քուֆայի, Մաղաիների (Տիղդոն), Բասրայի, Հուլուանի, Դինավարի, Նեհավենդի, Համադանի, Իսֆահանի, Ռեյի, Թաբարիստանի, ամբողջ Նորասանի, Նաղարաց ևրկրի, Քաշմիրի և Հնդկաստանի ժողովուրդների կիրլան Քաարայի⁶ այն պատի կողմն է, որի վրա է նրա դուռը: Սա հյուսիսային բևևոի ձախ կողմում է մինչև արևելքի կենտրոնը:

Իսկ Տիրևթը (Տուրրատ), Թուրքաց ևրկիրը, Ջինաստանը և ալ-Մանսուրան⁷, այսինքն այն ևրկրները, որոնք արևելքի կենտրոնից ութ աստիճան այն կողմ են, ապա [ներանց կիրլան] չատ մոտ է սև քարին⁸:

Ինչ վերաբերում է Եմենի ժողովրդի կիրլային, ապա նրա [ժողովուրդը] աղոթքի ժամանակ ուղղվում է [Քաաբայի] Եմենյան (Յամանի՝ հարավային) կողմած անկյունին: Աղոթքի ժամանակ նրանց ղեմքերը նայում են Հայաստանի բնակիչների ղեմքին:

Մադրիբի (հյուսիսային Աֆրիկա), Աֆրիկայի (Իֆրիկիա նահանգ), Եդիպտոսի (Միսր), Ասորիքի (Շամ), Ջադիրայի ժողովրդի կիրլան արևմուտքի (մադրիբի) մեջտեղում է: [Այս ժողովուրդներն] ուղղվում են Շամի (Ասորիքյան) կողմած անկյան կողմը, իսկ իրենց ևրեսներն աղոթքի ժամանակ ուղղում են դեպի Մանսուրա:

Ահա այն ամենն ինչ պետք է իմանալ մարդկանց կիրլայի և տարբեր կողմերի մասին աղոթքի ժամանակ:

ՍԱՎԱԴԸ (ՍՏՈՐԻՆ ՄԻՋԱԳԵՏԳ)

ԼՁ 5 - 6

Կսկսեմ Սավադի հիշատակումով, քանզի Պարսից արքաները այն կոչում էին Դևլե Իրանշահր, այսինքն Իրանի սիրտը:

Սավադը տասներկու նահանգ (քուրա) ունի, ամեն նահանգ կազմում է մի աստան (ոստան, չրջան) և վաթսուոն թասուջ ունի: Աստան թարգմանվում է ևրկրամաս (իհազա), իսկ թասուջ թարգմանվում է գավառ (նահիա): Աստան Շադ Ֆիրուզ նահանգը, որն այժմ Հուլուանն է, ունի հինգ թասուջ՝ Ֆիրուզ Կուբադը, ալ-Ջաբալը, Տաման, Արբեկան (Իրբի) և Նանիկինը:

ՍԱՎԱԴԻ ՀԱՐԿԵՐԻ ԳՈՒՄԱՐԸ

Էջ 14-15

Սավադի Հարկերի գումարը հնում Պերողի որդի Կավադի (Կուրագի իրն Ֆայրուդ) օրոք Հարյուր հիսուն միլիոն (հազար հազար) դիրհան միսկալ էր (քաշով): Օմար իրն ալ-Նաթթար [խալիֆան] հրամայեց չափազրել Սավադը, որի երկարությունը Ալսից ու Ջարրիից (Հյուսիսային երկրամաս) մինչև Արբազան Հարյուր քսանհինգ փարսախ է, իսկ լայնությունը Հուլուանի կիրճից մինչև Ուզայր ութսուն փարսախ է: Նրա ջարիրները հասնում էին երեսունվեց միլիոն ջարիրի: Նա ցորենի ամեն մի ջարիրի համար պահանջեց չորս դիրհան, գարու ջարիրի համար՝ երկու դիրհան, արմավենու ջարիրի համար՝ ութ դիրհան, որթատունկի ջարիրի համար՝ վեց դիրհան, առվույտի ջարիրի համար՝ վեց դիրհան: Եվ ջիզիա (դլխահարկ) որոշվեց հինգ հարյուր հազար մարդու համար, ըստ աստիճանների (դասերի, թարակատ):

Այսպիսով, Օմար իրն ալ-Նաթթարը Սավադի վրա հարկը դրեց Հարյուր քսանութ միլիոն դիրհան, Օմար իրն Արդ ալ-Ադիդ [խալիֆան] հարկ դրեց Հարյուր քսանչորս միլիոն դիրհան: Հաջջի իրն Յուսուֆ [փոխարքան] հազիվ տասնութ միլիոն դիրհան կարողացավ ստանալ, այսինքն Հարյուր միլիոնից ավելիով պակաս քան նախորդների օրոք, իր դաժանության, հիմարության և անիրավության հետևանքով: Նա թնթևացրեց Հարկերը երկու միլիոն դիրհանով և հավաքվեց միայն տասնվեց միլիոն դիրհան: Սավադի ընակչությանը արգելեց կով մորթելը, որպեսզի հողամշակությունն ու երկրագործությունը զարգանան:

Բանաստեղծն ասել է այդ մասին.

Բողոքեցինք նրան Սավադի ավերման համար,

Իսկ նա, տգիտությամբ, կովի միսն արգելեց:

Ոսորով Պարուեզի թագավորության ժամանակ ստացված հարկը, նրա թագավորության տասնութերորդ տարում, չորս հարյուր քսան միլիոն միսկալ էր, որի քաշն է այժմյան հաշվով յոթ տասներորդական միսկալ, այսինքն վեց հարյուր միլիոն դիրհան: Դրանից հետո նրա թագավորության հարկատվությունը հասավ վեց հարյուր միլիոն միսկալի:

ԵՐԿՐԻ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ ՏԻՏՂՈՍՆԵՐԸ

Էջ 16-17

Իրաքի թագավորին ընդհանրապես կոչում են Քիսրա (Ոսորով), որը չահանշահն է, Ռումի (արևելահռոմեական կայսրության)

Թագավորին ընդհանրապես կոչում են կայսր (կայսար) և նա բասիլև (վասիլևս) է: Թուրքերի ու Տիբետի (Տուբրատ) և ինքզնին թագավորները բոլորը կոչվում են խաբան, բացի (թուրքաց ցեղ) ինքնուրույն թագավորից⁹, որին կոչում են Ջարդույև: Չինաստանի թագավորին (կոչում են) Բաղրուր: Սրանք Աֆրիդունի որդիներն են: Հնդկաստանի մեծ թագավորին՝ Բալհարա, այսինքն թագավորաց թագավոր: Հնդկաստանի թագավորներից են Ջարան, Թաֆինի թագավորը, Ջուրդի Ղարայի, Ռահմայի թագավորները, Կամիրունի թագավորը: Ջարիջի թագավորին (կոչում են) Պատիջար (Ֆատիջար, Ջավայի իշխան), Նուրիայի թագավորին՝ Քարիլ, Հաբեչաստանի (Եթովպիայի) թագավորին՝ Նեզուս (ալ-Նաջաշի), Արևելյան ծովի կղզիների թագավորին՝ ալ-Միհրաջ, սլավոնների (Սակալիթ) թագավորին՝ Կինադ (կնյադ):

ԹԱԳԱՎՈՐՆԵՐ, ՈՐՈՆՑ ՏԻՏՂՈՍՆԵՐ ԷՐ ՏՎԵԼ ԱՐԴԱՇԻՐ ԱՐՔԱՆ (ՇԱՀԻՆ)

ԼՁ 17-18

Բուզուրդ Բուշան չառ, Քիլան չառ, Բուդ Արդաշիրան չառ, այսինքն Մոսուլի (Մաուսիլ), Մայսան չառ, Բուզուրդ Արմանիան չառ (արքա Հայոց Մեծաց), Ադարբադգան չառ, Սիջիստան չառ, Մերվ չառ, Քիրման (Քարման) չառ, Բադաշվաբգարչառ, Յաման չառ, Տադիան (արաբաց) չառ, Քադիլ չառ, Բուրջան չառ, Ամուքան չառ, Սարիան չառ, Մուլքիդգան չառ (Նորասանում), ալ-Լան չառ (Մուղանում), Բարաջան չառ (Ատրպատականում), Կուֆա չառ (Քիրմանում), Մուլքան չառ (Սինդում), Տուբան (Թուրան) չառ (Թուրքաց երկրում), Հինդուան չառ, Քաբուլան չառ, Շիրիան չառ (Ատրպատականում), Ռայհան չառ (Հնդկաստանում), Կիկան չառ (Սինդում), Բադասական (Բալաշջան) չառ, Դաուարան չառ (Դաուար երկրում), Նախաբան չառ, Կաշմիրան չառ, Բաքարգան չառ և Գուզաֆտ (Քուզաֆտ) չառ: Սրանք են թագավորների տիտղոսները (անունները):

ԱՐԵՎԵԼՔԻ (ՄԱՇՐԻԿ) ՄԱՍԻՆ

ԼՁ 18

Սկսենք Արևելքով, որը [Պարսից] թագավորություն քառորդն էր: Հիշենք նախ Նորասանը, որը գտնվում էր սպահակտ պատգոսպանի (խաբանադ բադուսթան) ձևովի տակ: Կային չորս մարզպաններ, ամեն մի մարզպանին (նթակա էր) Նորասանի քառորդը: Ուստի մի

քառորդը Մերվ (Մարվ) Շահիջանի և գավառների մարզպանին, մի քառորդը՝ Բալխի ու Թոխարիստանի մարզպանին, մի քառորդը՝ Հերատի, Բուշանջի, Բադղիսի և Սիջիստանի մարզպանին:

Ասել է Իրն Մուֆարրիդը [Հերատի մասին]

Հերատի օրը մուսուլմանները կանչեց, որ լսես,

Նա կանչում էր աջ, բայց դու գնացիր ձախ:

Իսկ չորրորդ քառորդն էլ՝ Մավերաննահրի¹⁰ (Մա վարա ալ-նահր) մարզպանին:

ԱՐԵՎՄՈՒՏՔԻ (ՄԱՂՐԻԲ) ՄԱՍԻՆ

ԼՁ 72-73

Արևմուտքը (Մազրիբը) Թագավորության մեկ քառորդն էր: Նրա սպահակետը (խբահբազ), պարսիկների մոտ ընդունված ձևով կոչվում էր խուրբարան սպահակետ:

ՃԱՆԱՊԱՐՀԸ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԻՑ (ԲԱՂԴԱԴ)

ԴԵՊԻ ԱՐԵՎՄՈՒՏՔԻ

Բադղադից Սալահին չորս փարսալս է, ապա մինչև Անբար ութ փարսալս, ապա ալ-Ռարր յոթ փարսալս, ապա Հիտ՝ տասներկու փարսալս:

Ասել է Աբու-լ-Ամայսալը [Հիտի մասին].

Ինչո՞ւ նա կանդ չառավ Հիտում այդ գիշեր

Կամ էլ նախորդ գիշերը՝ Անբարում:

Ապա դեպի Նաուսա՝ յոթ փարսալս, ապա Ալուսա՝ յոթ փարսալս, ապա Ֆուհայմա՝ վեց փարսալս, ապա Նահիա՝ տասներկու փարսալս ցամաքում, ապա ալ-Դազկի՝ վեց փարսալս, ապա ալ-Ֆարզա՝ վեց փարսալս, ապա Վազի ալ-Սիբա (առյուծների հովիտ)՝ վեց փարսալս, ապա խալիջ (ծոց) Բանի Ջումայ՝ հինգ փարսալս, ապա ալ-Ֆաշ Կիրկիսիայի դիմաց՝ յոթ փարսալս, ապա Նահր (գետ) Սաիդ՝ ութ փարսալս, ապա Ջարդան՝ տասնչորս փարսալս, ապա ալ-Մուբարաք՝ տասնմեկ փարսալս, ապա Ռակկա՝ ութ փարսալս, որը հունարեն կոչվում է Կալանիկուս (Կալինիկոս), իսկ Ռակկան գլխավոր քաղաքն է Դիար Մուդարի, որի մեջ են ալ-Ռաֆիկան, Ոսոռանը, որը հունարեն կոչվել է Հելլենոպոլիս: Ասել է Սուդայֆը.

Կարծում էի, որ պինդ եմ, սակայն ինձ թուլացրեց

Հավատի պաշտպանի գերեզմանը Ոսոռանում:

[Դիար Մուդարի մեջ են նաև] Եզեսիան, Սամոսատը, Սարուջը, Ռաս Բայֆան, ալ-Արդ ալ-Բայդան (Սպիտակ հող), Տալլ Մաուզանը,

ալ-Ռավարին, ալ-Մաղջինը և ալ-Մուղայբիրը:

Դիար Մուղարի հարկը (յարաջ) հինգ միլիոն վեց հարյուր հազար զիրհնեմ է, իսկ Ռուժափի (Ռուսաֆա), Ջայթունայի, Քաֆր Հաջարի և Ջաղիրայի գնահատված [հարկը] չորս հազար զինար է:

ԿԻՆԱՍՐԻՆԻ ԳԱՎԱՌՆԵՐԸ (ՔՈՒՐԱ)

Լջ 75

Մաառատ Մասրայն դավառ, Մարտահուան, Աարմայն և Հիյար Բանի ալ-Կակա, Տլուք (Դուլուք), Ռարան և Հալեր:

Ավասիմ [դավառն ունի] Կիրոս (Կուրուս) գավառը, ալ-Ջուման, Մանրիջը, Անտիոքը, Տիգրինը, Բուկան, Բալիսը, Հիչամի Ռուսաֆան:

Կիննասրինի և Ավասիմի հարկը (յարաջ) չորս հարյուր հազար զինար է:

Կիննասրինից ճանապարհը գնում է Շայզար, ապա Եպիփանիա (Համա), Եմեսա (Հիմա):

ԴԻԱՐ ՌԱԲԻԱՅԻ ԳԱՎԱՌՆԵՐԸ (ՔՈՒՐԱ)

Լջ 95

Մծբին, Արդն, Ամիդ, Ռաս Այն և Նփրկերտ. Ասել է բանաստեղծը. Մի անգամ Ամիդում, Ռաս Այնում

Եվ Լերբան Նփրկերտում:

[Դիար Բաքրում են նաև] Մարդինը, Բաարբայան, Բալադը, Սինջարը, Կարդան և Բազաբդան. Ասել է բանաստեղծը.

Կարդան ու Բազաբդան ամառանոց ու գարնանային կայան են Ջուբը քաղցը է և [դրախտի] Սալսաբիլի նման է սառնությամբ:

Նրանում է նաև Թուր Աբդինը, որի մասին բանաստեղծն ասել է.

Տիրել է Հաղբային ու Եփրատի ոռոգած հողերին

Իսկ արևելքում Տիգրիսի ոռոգած հողերը և Թուր Աբդինը:

Դիար Ռարիայի հարկը (յարաջ) յոթ միլիոն յոթ հարյուր հազար զիրհնեմ է:

Մծրինից Դարա հինգ փարսալս է, ապա մինչև Քաֆարտուսա յոթ փարսալս է, ապա Ռաս Այն յոթ փարսալս է, ապա ալ-Ջարուդ հինգ փարսալս է, ապա Հիսն (բերդ) Մասլամա վեց փարսալս է, ապա Բաջարուան յոթ փարսալս է, ապա Ռակկա Լերբ փարսալս է. Ասել է բանաստեղծը.

Ալլահը թող ջրի Բալիսը և Տալլ Բահրան

Եվ Բաջարուանը մեծ ճանապարհի վրա:

ԱԶԱԿՈՂՄՑԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԸ ՄԾԲԻՆԻՑ ԱՐՁՆ

Էջ 95 - 96

Մծրինից Դարա Հինգ փարսալս է, ապա Քաֆարտուսա յոթ փարսալս է, ապա Կասր Բանի Նազի վեց փարսալս է, ապա Ամիդ, որը Տիգրիսի վրա է յոթ փարսալս է, ապա Նփրկերտ Հինգ փարսալս է, ապա Արզն յոթ փարսալս է:

ՁԱԽԱԿՈՂՄՑԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԸ ԱՄԻԴԻՑ ՌԱԿԿԱ

Էջ 96

Ամիգից Շիմշաթ յոթ փարսալս է, ապա Տալլ Զաֆր՝ Հինգ փարսալս է, ապա Զարնան՝ վեց փարսալս է, ապա Բամակղա՝ Հինգ փարսալս է, ապա Զուլլար՝ յոթ փարսալս է, ապա Եղեսիա՝ չորս փարսալս է, ապա Ուռուան՝ չորս փարսալս է, ապա Տալլ Մահրա՝ չորս փարսալս է, ապա Բաջարուան՝ յոթ փարսալս է, ապա Ռակկա՝ երեք փարսալս է:

ՃԱՆԱՊԱՐՀԸ ՌԱԿԿԱՑԻՑ ՄԻՋԱԳԵՏՔԻ ՍԱՀՄԱՆԱՑԻՆ ՇՐՋԱՆԸ (ԱԼ-ՍՈՒՂՈՒՐ ԱԼ-ՋԱԶԱՐԻՑԱ)

Էջ 97

Դրա ուղղությունն է Սալգուս, Քայսում, Շիմշաթ, Մալաթիա, Զապետրա, Հագաս, Մարաշ, այս վերջինների միջև երեսուն մղոն կա և Կամալս, Հիսն Մանսուր և Կիրոս, Տլուք (Դուլուք) և Ռաբան:

Ռակկայից Այն ալ-Ռումիյա վեց փարսալս է, ապա Տալլ Արղա՝ յոթ փարսալս, ապա Աարուջ՝ յոթ փարսալս, ապա ալ-Մուղանիյա՝ վեց փարսալս, ապա Սամոսատ՝ յոթ փարսալս, ապա Հիսն Մանսուր՝ վեց փարսալս, ապա Մալաթիա՝ տաս փարսալս, ապա Զապետրա՝ Հինգ փարսալս, ապա Հագաս՝ չորս փարսալս, ապա Մարաշ՝ Հինգ փարսալս, ապա Ամկ Մարաշ, իսկ Ամկ է կոչվում լեռներով չրջապատված ամեն մի դաշտ:

Մալաթիայից Կամալս չորս փարսալս է:

ՁԻԵՐԻ ԿԱՑԱՆՆԵՐԸ (ՄԻՔԱՔ) ՀԱԼԵԲԻՑ ԱՍՈՐԻՔԻ ՍԱՀՄԱՆԱՑԻՆ ՇՐՋԱՆԸ (ԱԼ-ՍՈՒՂՈՒՐ ԱԼ-ՇԱՄԻՑԱ)

Էջ 99-101

Հալերից Կիննասրին յոթ միերի կայան է, ապա Անտիոք չորս կայան է, ապա Ալեքսանդրեկ (Խսքանդարիյա) չորս կայան, ապա 440

Մամեստիա յոթ կայան, իսկ Պիրամոս (Ջայհան) դետր ճեղքում է Մամեստիան, որի անունն է Մարսուբաստիա (Մոպսուեստիա): Մամեստիայից Ադանա երեք կայան է, իսկ Ադանայի անունն է Ադանում և դանվում է Սայհանի վրա. Ասել է բանաստեղծը.

Ով դու որ ինձանից բաժանված ես Ռումի լեռներով և
Ջաոթիթավերով և Սարոսի (Սայհան) ծանծաղուտներով
Ճանապարհը կտրող լեռնանցքով, Տիանայի ծերպերով
Հերակլիայով և Հիսն Սինան բերդով:

Ապա Ալանայից Տարսոն հինգ կայան է, իսկ Տարսոն անունը
Հունարեն Տարսում է. Ասել է Արու Սաիդը.

Թողել են նրան իրենց ետևում, թաղված Տարսոնի պատենչներում
Ինչպես թողեցին մի ժամանակ նրա հորը Թուսում:

Ասել է Ֆարաջ իրն Օսման ալ-Միկսամին.

Երանի թե ուղտերն իջնեին Տարսոնի դաշտը

Ծանոթ դետի ափերը

Ուղտերը տանում են գեղանի պարմանուհիներին

Գեղեցիկ են ու սիդաճևճ

Ու սրտերն են նվաճում:

ՍԱՀՄԱՆԱՑԻՆ ԳՈՏՈՒՑ ՆԵՐՍ ԸՆԿԱԾ ԱՍՈՐԻՔԻ ԱՄՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Անադարրան (Այն Ջարրա), Հարունիյան, Քանխաստ ալ-Սաուդան
և Տալլ Ջուրայրը [գտնվում են] Տարսոնից ութ մղոնի վրա:

ԴԱՐԲ ԱԼ-ՍԱԼԱՄԱՆ (ԴՐՈՒՆ-Ք ԿԻԼԻԿԻՈ) ԵՎ ՃԱՆԱՊԱՐՀԸ ԴԵՊԻ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ԾՈՑԸ

Տարսոնից Ուլլայկ տասներկու մղոն է, ապա Ռահուա և ալ-Ջաուդատ տասներկու մղոն է, ապա ալ-Ջարդակուր՝ յոթ մղոն, ապա մինչև Պոտանդոն (Բաղանդուն) յոթ մղոն է: Ասել է Մուհամմադ իրն Արդ ալ-Մալիքը [դիմելով Մուտասսիմ խալիֆային].

Բաղանդունի օրը [ամրապնդեցիր քո խալիֆայությունը]՝

Ինչպես որ ստացել էիր [այդ պատիվը] Բաղանդունի մի այլ օրում:

Ապա մինչև Մուասքար ալ-մալիք (Թագավորի ճամբարը) Լուլուա-յի ջերմուկի (հիմնա) վրա և Սաֆսաֆ տաս մղոն է և կհասնես Մուասքար ալ-մալիք, լեռնանցքն անցնելուց և դաշտ դուրս գալուց հետո: Մուասքարից մինչև վագի (հովիտ) Թարկա տասներկու մղոն է, ապա Մանի քսան մղոն է, ապա Հերակլիայի գետը՝ տաս մղոն: Ասել է ալ-Արբաս իբն ալ-Ահնաֆը.

Հերակլիան անձնատուր եղավ, երբ զարմացած տեսավ
Ծանր մեքենաները, որոնք բոցավառ նավթ էին նետում:

Ապա մինչև ալ-Լարն քաղաքը ութ մղոն է, ապա Ռաս ալ-Ղարա
(անտառի գլուխ)՝ տասնհինգ մղոն, ապա Մասքանայն՝ տասնվեց
մղոն, ապա Այն Բուրդուս՝ տասներկու մղոն, ապա Ահսա դետր՝
տասնութե մղոն, ապա Կոնիայի արվարձանը՝ տասնութե մղոն, ապա
Ալամայն՝ տասնհինգ մղոն, ապա Արրումիսմանա՝ քսան մղոն, ապա
Վադի ալ-Ջաուդ (Ընկույզի Հովիտ)՝ տասներկու մղոն, ապա
Ամորիոն՝ տասներկու մղոն:

ՄԻ ԱՅԼ ՃԱՆԱՊԱՐՀ

ԼՂ 102-103

Պոտանդոնից ալ-Քարմ (որթատունկ), ապա ալ-Նուրա, ապա
Քաուքաբից աջ գտնվող եկեղեցիները, ապա Վաֆրա, ապա Բալիսա,
ապա Մարջ ալ-Ուսկուֆ (Եպիսկոպոսի դաշտ), ապա Ֆալուդրի, ապա
Կուռքերի (ասնամ) գյուղը, ապա Վադի (Հովիտ) ալ-Ռիհ, ապա Նի-
միրթի, ապա ալ-Սայգ, ապա Այնու, ապա Մուդուիս, ապա Մախադա
(ծանծաղուտ), Ջաուդ (ընկույզ) գյուղը, ապա Ղաթթասին (սուզվող-
ներ), ապա Պատրիկի գյուղը, ապա Նակուլիայի գաշտը, ապա Դանուս,
ապա ճանապարհը դեպի Դարաուլիյա (Ռորիլիում) և մի ուրիշ ճա-
նապարհ դեպի ձախ՝ Հիսն Բալումին, ապա Կութայա և դեպի ձախ՝
Ռունդակ, ապա Արիդոս նեղուցի վրա, ապա Կոստանդնուպոլսի ծոցը
և դա Պոնտոս կոչված ծովն է և դալիս է Ուզարապ ծովից:

ԼՂ 105-106

[Կոստանդնուպոլսի] ծոցից այս կողմ տասնմեկ նահանգ (ամալ)
կա: Նախ Պափլագոնիա (Աֆլաջունիա) նահանգը, ուր հինգ բերդ կա,
ապա՝ Օպտիմատոն (Ուֆթի Մաթի), որը բացատրվում է ականջ ու
աչք, ուր երեք բերդ կա և Նիկոմիդիա քաղաքը, որն այսօր ավերակ
է: Ապա Օպսիկիոն (Աբսիկ) նահանգը, որի մեջ է Նիկիա քաղաքը և
ունի տաս բերդ, իսկ ծովը Նիկիայից ութ մղոնի վրա է: Ունի քաղցր
ջրով լիճ, որի երկարությունը տասներկու մղոն է: Լճի մեջ երեք լեռ
կա, իսկ քաղաքից մինչև լիճը փոքր դուռ կա և եթե սպառնալիքի
տակ լինեն, իրենց երկխաներին հանում են բերդից, նավերով դեպի
լիճը տանում, հասցնում են այն լեռները, որ լճում են:

Թրակիսիա (Տարկասիա) նահանգը, որի մեջ եղած բերդերից է
Եփեսոսը (Աֆսիս) Ավասիմ գավառում (ռուստակ) և սա Քարայրի
մարդկանց քաղաքն է, ինչպես նաև՝ չորս բերդեր: Նրանց մղկիթում

արարել են գիրք էր կարդացվել, երբ Մասլաման անել էր Ռուսի երկիրը: Իսկ ալ-Ռակիմի մարդիկ [Քարայրի] գավառի մի փոսի մեջ են Ամորիոնի և Նիկիայի միջև [.....]

Էջ 107 – 108

Անատոլիկոն (Նաթլուս) նաՀանգը, որը նշանակում է արևելյան կողմեր, Ռումի մեծագույն նաՀանգն է, որի մեջ է Ամորիոն քաղաքը: Սրա աշտարակները քառասունչորս Հատ են: [Անատոլիկոնի] բերդերից են ալ-Ալամայնը, Մարջ ալ-Շահմը, Բուդուսը և ալ-Մասքանայնը և երեսուն ընդ, [ինչպես նաև] ալ-Բասնը և ալ-Մասրաթլին:

Ուարսիանոն (Ուարսիուն) նաՀանգը Մալաթիայի լեռնանցքից այն կողմն է, նրանում եղած բերդերն են Ուարչանան և չորս այլ բերդեր: Բուկլլարոնների (Բուկուլլար) նաՀանգում կա Անկարա (Անկիրա) քաղաքը, Սամալուն և տասներեք բերդեր:

Նրան Հաջորդում է Արմենիակոն (Արմինիակ) նաՀանգը¹¹, որի բերդերից են Կողոնիան (Կուլունիյա)¹² և տասնվեց բերդեր:

Ասլա Ուաղտիք (Ուաղիյա)¹³ նաՀանգը, որը սահմանակից է Հայաստանին և նրանում վեց բերդ կա:

Սելեկիա (Սալուկիյա) նաՀանգը Ասորիքի ծովի կողմից է և [Հասնում է] մինչև Տարսոն ալ-Լամիս գետը: Այն կառավարում է լեռնանցքների կառավարիչը և նրանում եղած բերդերից է Սելեկիան և կան այլ տասը բերդեր:

Կապադովկիան սահմանափակվում է Տարսոնի, Ադանայի և Մամեստիայի լեռներով: Նրա ամրացված վայրերից են Կուրրան, Հասինը, Անթիդուն, ալ-Աջրարը և Զուլ-Քիլաան: Այս վերջինը մի վայր է չրջապատված ամրոցներով: Արարները սրան տվել էին Զուլ-Կիլաա (Ամրոցների տիրուհի), որը գրվում էր կ (կաֆ)–ով, իսկ Հետո վերածվեց ք (քաֆ)–ի, մինչգևո իրական անունն է Զուսասթարուն, որի իմաստն է «աստղերին մոտեցող»: Կան ևս տասնչորս ամրացված վայրեր, որոնցից են Մաթամիրը, Մաջիդան, Բալանսան, Մալանդասան, Կունիան, Մալակուրիան, Բադալան, Բարնաուան և Սալամունը: Մալակուրիա անունը նշանակում է ջրաղացաքարերի Հանք, քանի որ այդ քարերը նետում են նրա լեռներից:

ՌՈՒՄԻ ՊԱՏՐԻԿՆԵՐԻ (ԲԱԹԱՐԻԿԱ) ՄԱՍԻՆ

Էջ 109

Ռումի պատրիկները միշտ տասներկուսն են, որոնցից վեցը Կոստանդնուպոլսում են, իսկ մյուսները՝ նաՀանդներում: Այս վեց պատ-

րիկներն են Ամորիոնի պատրիկր. Անկարայի պատրիկր. Արմինիա-կուսի (Արմինյակ) պատրիկր, Տարակիայի (Թրակիա) պատրիկր և սա մի նաՀանդ է, որ գտնվում է Կոստանդնուպոլսի ետևում Բուրջանի (Բուլղարիա) կողմից, Սիկիլիայի (Սիկիլիյա) պատրիկր, և սա մի մեծ կղզի է և ընդարձակ թագավորություն Իֆրիկիայի դիմացը:

Կուսթանթինիյան (Կոստանդնուպոլիս) Ռումի մայրաքաղաքն է և միաժամանակ նրա ամենամեծ բնակավայրը, որը կոչվում է Հիպպոդրոմ (Բաղրում): Թագավորը Հոռոմների Համար ամենամեծն է և ամենահզորը: Թագավորությունը ժառանգական չէ, ոչ էլ պարտադիր որևէ գիրք (կանոն) ունեն, այլ պարզապես ով Հաղթում՝ լիշխում է: Նրանց մեջ իշխել են տղամարդիկ, կանայք: Թագավորը կոչվում է բասիլի (բասիլես), նրա զգեստն է ծիրանին (ֆուրֆուր, պորփյուր), որը մետաքսի մի տեսակն է և նրա փայլը մի քիչ սևին է տալիս: Ծիրանին Հագնում է և կարմիր մուճակը կրում միայն թագավորը, իսկ ով փորձի այն կրել, կսպանվի: Ով թագավոր է Հայտարարվում, կրում է մի կարմիր մուճակ (Հողաթափ) և մի սև մուճակ:

Այս Հիպպոդրոմ (Բաղրում) քաղաքում չորս Հարյուր մարդ կա, որ Հագնում է կանաչ թիկնոց (թայալիսա), ոսկով Հյուսված, և նրանք թագավորի Հետ խորհրդակցում են նրա և պատրիկների գործերի շուրջը: Նրանցից մեկը դառնում է Կոստանդնուպոլսի կառավարիչ, մյուսը թագավորի սենեկապետությունն (Հիջաբա) է վերցնում: Սրանք սուր են գործածում Իսմայիլի որդիների (արաբների) դեմ և կոտորում: Հաճախ դերիներին կացիներով կամ քարերով լսփել են տալիս և փոխ մեջ են նետում, ուր վառված կրակ կա:

Հեծելազորը, որն արքունի դուան է կցված, բաղկացած է չորս Հազար ձիավորից և չորս Հազար Հետևակից:

Թաղավորի ճամբարի վրա, թեկուզ նա տեղում լինի, թե Հեռացած, չորս դրոշ է լինում և չորս պատրիկներ ձիավոր դնդերով, ամեն մեկի մեջ լինում է տասներկու Հազար [ձիավոր], որից վեց Հազարը կանոնավոր զորք է, իսկ վեց Հազարը՝ ծառաներ (չաջիրգ):

Երբ թագավորը [արշավանքի] է ելնում արաբաց երկրի դեմ, ճամբար է դնում Դորիլիումում (Դարաուլիյա), Կոստանդնուպոլսից չորս օր Հեռավորության վրա: Սա արաբների ու Հոռոմների Հավաքավայրն է, մի կանաչ, բուրումնավետ դաշտ, ուր Հոսում է մի վճիտ դետ, լայնությունը մոտավորապես երեսուն կանգուն (դիրբա), բխում է ակունքներից և թափվում Սակարիա (Սաղարի) գետը¹⁴, իսկ Սակարիան թափվում է Մեծ ծովը, Կոստանդնուպոլսի ետևի կողմում:

մողի ցորենին՝ աստեղան երեք դինար: Ասեն մի մողի երեք մաքքուք (ցորենի չափ) է: Բերքի մեկ տասանորդը վերցվում է և տարվում շտեմարանները դորքի համար:

Հրեաներից ու զրադաշտականներից տարեկան մեկ դինար է վերցվում: Ամեն մի տնից, ուր կրակ է վառվում տարեկան վեց դիրհնա է վերցվում: Հոռոմների երկրի պտուղները դաշտերում, թե լեռների վրա հասնում են Այլուլ (սեպտեմբեր) ամսին:

[Ռադմական] դիվանում դրանցված է հարյուր քսան հազար մարդ, որից ամեն տաս հազարի վրա դրված է մի պատրիկ, ամեն մի պատրիկի հետ մի տուրմարխ¹⁵ (թուրմախան), ամեն տուրմարխ հինգ հազար մարդու վրա է: Տուրմարխի հետ կա հինգ դրունգար¹⁶ (թուրունջարին), ամեն մի դրունգար հազար հողու վրա է: Դրունգարի հետ կան հինգ կոմսեր (կամամիսա), իսկ ամեն մի կոմս երկու հարյուրի վրա է: Կոմսի հետ լինում է հինգ հեկատոնտարքոս (կունթարխին), իսկ ամեն հեկատոնտարքոսի հետ՝ չորս դեկարքոս (դակարխ), ամեն դեկարքոս չորս հոգու վրա է:

Ռոճիկը (աթա) տարբեր չափերի է լինում, մեծ մասամբ քառասուն լիտր (ոաթլ) ոսկի, կամ երեսունվեց լիտր, կամ քսանչորս լիտր, կամ տասներկու, կամ վեց, կամ մեկ լիտր: Ռազմիկների (դորքի) ռոճիկը տասնութ և տասներկու դինարի միջև է և դա սահմանված է ամեն տարվա համար: Սակայն նրանց տրվում է ամեն երեք տարին մեկ անգամ, նույնիսկ չորս տարին, կամ հինգ և նույնիսկ վեց տարին մեկ միանվագ ռոճիկ:

Պատրիկներից ամենամեծը թագավորի փոխանորդն (սալիֆա) է նրա վեդիրը, ապա յոգոթետը¹⁷ (լուղուսիթ)՝ հարկային դիվանի (դիվան ալ-սարաջ) պետը, գրագրությունների առաքման պետը, սենեկապետը (հաջիր) և փոստի (քարիդ) դիվանի պետը, ապա դատավորը, պահակադորքի պետը և [պալատի] վերահսկողը (մուրակկիր):

ՀՅՈՒՄԻՍԻ (ՋԱՐԲԻ) ՄԱՍԻՆ

ԼՁ 118-125

Ջարբին Հյուսիսային երկիրն է և թագավորության մեկ քառորդը: Պարսից [թագավորության] ժամանակ Հյուսիսի սպահապետը կոչվում էր Ատրպատականի (Ադարբադգան) սպահապետ: Այս երկրամասում են Հայաստանը, Ատրպատականը, Ռեյը, Դմբավանդը (Դիմավանդ), Շալանքան. Ասեկ է Վահրամ Դոռը (Բահրամ Զուր):

Ես Շալանքայի առյուծն եմ

Վագրն եմ, որ խոյանում է [կովի]:

Նրանում (Ջարբիում) են նաև Թաբարիստանը, Ռույանը, Ամոլը,

Սարիան, Շալուշը, ալ-Լարիդան, ալ-Շիրդը, Թամիսը, Դիհիստանը, ալ-Քալաբը, Դեղանը (Ջիլան), Բադաշվարջարը, իսկ Թաբարիստանի, Ջիլանի և Բադաշվարջարի Թագավորը կոչվում է Նորասանի Ջիլ Ջիլանը: Ասել է Մուհամմադ իբն Աբգ ալ-Մալիքը.

Պճնել են փղին գույններով. ըստ սովորականի

Նորասանի Ջիլ Ջիլանին տանելու:

Փղի անդամները ներկում են միայն

Նշանավոր մարդկանց տանելու:

Այս երկրամասում են [նաև] ալ-Բաբըրը, ալ-Թայլասանը, ալ-Ուս-գարը, ալ-Լանը և ալ-Սակալիբը:

ՃԱՆԱՊԱՐՀԸ ԴԵՊԻ ԱՏՐՊԱՏԱԿԱՆ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆ

Նորասանի ճանապարհից պետք է թեքվել Սինն Սումայրայի մոտ: Սինն Սումայրայից մինչև Դինավար հինգ փարսալս (երկու սիքքա՝ ձիերի կայան), Դինավարից Ջինջան (Ջանջան)՝ քսանինը ձիերի կայան (սիքքա), ապա Մարաղա՝ տասնմեկ կայան, ապա Միանիջ (Մայանիջ)՝ երկու կայան, ապա Արդաբիլ՝ տասնմեկ, ապա Վարդանակերտ (Վարսան), որը Ատրպատականի վերջին գավառն է՝ տասնմեկ կայան:

ԱՏՐՊԱՏԱԿԱՆ ՆԱՀԱՆԳԻ ՔԱՂԱՔՆԵՐՆ ՈՒ ԳԱՎԱՌՆԵՐԸ

Մարաղան, Միանիջը, Արգաբիլը, Վարդանակերտը, Սիսարը, Բարգանը, Սաբուրլաստը և Դավրեժը (Տարրիզ) պատկանում են Մուհամմադ իբն Ռավվադ ալ-Աղգիին, Մարանդը՝ Իբն ալ-Բախսին, Նոյը, Քուլսարան, Մուղանը՝ Շաքլային, Բարդանդը, Դանձակը (Ջանդա), որը Պարվեղի (Աբարուիզ) քաղաքն է և Ջաբրավանը ու Նարիդը Ալի իբն Մուռային՝ են պատկանում: Ուրմիան Ջրադաշտի (Ջարադուշտ), ինչպես նաև Սալմաստն ու Շիրը: Այնտեղ կա Ատրվինասպի (Ադարգուշնաս) կրակատունը, որը մեծ հարգանք է վայելում զրադաշտականների (մաջուս) մոտ: Ամեն մի նոր Թագավոր Տիգրոնից ոտքով նրան այցելութան էր դնում: [Ատրպատականում են նաև] Բաջարուանը, Սալակ գավառը, Սինդաբայա գավառը, ալ-Բադղը, Ուրմի գավառը, Բալուանքիթը, Սարատի և Դասքիավաբի գավառը և Մայանհիրջ գավառը:

ՃԱՆԱՊԱՐՀԸ ԳԻՆԱՎԱՐԻՑ ԲԱՐՁԱՆԳ

Դինավարից Նաբարջան՝ յոթ փարսալս, ապա Տալլ Վան՝ վեց փարսալս, ապա Սիսար՝ յոթ փարսալս, ապա Անդարար՝ չորս փարսալս:

սալս, ապա Փայտակարան (Բայլական)՝ Հինգ փարսալս, ապա Բարդա՝ վեց փարսալս, ապա Սաբուրխաստ՝ ութ փարսալս, ապա Մարադա՝ յոթ փարսալս, ապա Դախառական՝ տասնմեկ փարսալս, ապա Դավրեժ՝ ինը փարսալս, ապա Մարանդ՝ տաս փարսալս, ապա ալ-Ուան՝ չորս փարսալս, ապա Ուոյ՝ վեց փարսալս:

Մարադայից Բուրսուրա՝ տաս փարսալս, ապա Սարատ՝ տաս փարսալս, ապա ալ-Սիր՝ Հինգ փարսալս, ապա Արդարիլ՝ Հինգ փարսալս, ապա Մուղան՝ տաս փարսալս:

Արդարիլից Ուուչ՝ ութ փարսալս, ապա Բարդանդ՝ վեց փարսալս: Բարդանդն ավերակ էր և Աֆշինը վերակառուցեց որպես քաղաք և այնտեղ հաստատվեց: Բարդանդից Սադրասպ, ուր Աֆշինի առաջին խրամատը կա՝ երկու փարսալս, ապա Զահրքաշ ուր նրա երկրորդ խրամատը կա՝ երկու փարսալս, ապա Դիվ Ռուդ, ուր նրա երրորդ խրամատը կա՝ երկու փարսալս, ապա Բաբեկի քաղաք Բադդ¹⁸ մեկ փարսալս: Ասել է Հուսայն իրն ալ-Դահաբը:

Բադդի բնակիչներից չեղեց ոչ ոքի

Բացի Իրամի նմանությամբ նկարներից:

Եվ ճանապարհը Բարզանդից Բաղասականի և Վարդանակերտի դաշտը, որն Ատրպատականի վերջին շրջանն է՝ տասներկու փարսալս:

Մարադայից Դանձակ՝ վեց փարսալս է, ապա Մուսա աբադ՝ Հինգ փարսալս, ապա Բարդա՝ չորս փարսալս, ապա Զաբրավան՝ ութ փարսալս, ապա Նարիդ՝ չորս փարսալս, ապա Ուրմիա՝ տասնչորս փարսալս, ապա Սալմաստ ցամաքով և Ուրմիա լճով՝ վեց փարսալս:

Ատրպատականի հարկը (սաբաջ) երկու միլիոն դիրհեմ է:

ՃԱՆԱՊԱՐՀԸ, ՈՐՈՎ ԸՆԹԱՑԵԼ Է ՄՈՒՀԱՄՄԱԴ ԻԲՆ ՀՈՒՄԱՑԴԸ

Դնաց ցամաքով, երբ հավաքել էր իր զորքի հրամանատարներին, ձիերով Մարադայից ընթացավ Բարդա, ապա Սիսար, ապա Շիզ, որը չորս փարսալս հեռավորություն ունի Դինավարից, ապա՝ դեպի Դինավար:

ՃԱՆԱՊԱՐՀԸ ԴԵՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ

Վարդանակերտից Պարտավ ութ ձիերի կայան (սիքքա) է, ապա դեպի Հայաստանի Մանսուրան չորս կայան է: Պարտավից Տփղիս՝ տաս կայան, Պարտավից Դարբանդ՝ տասնհինգ կայան, Պարտավից Դվին՝ յոթ կայան:

Մարանդից Վադի¹⁹ տաս փարսալս է, ապա Նախճավան՝ տաս

փարսալս, ապա Դվին՝ քսան փարսալս:

Վարդանակերտից Դիրսան երեք փարսալս է. ապա Փայտակարան՝ ինը փարսալս, ապա Պարտավ՝ տասնչորս փարսալս և Պարտավից ալ-Բադդ՝ երեսուն փարսալս:

Առաջին Հայաստանն (Արմինիա) է՝ ալ-Սիսաջան (Սիսական), Առան, Տիգրիս, Պարտավ, Փայտակարան (Բայլական), Կապադակ և Շարուան:

Երկրորդ Հայաստանն է՝ Վիրք, Սուղդաբիլ, Պերոզապատ (Ֆիրուզ Կուբադ) և ալ-Լադք (լեզգիներ):

Երրորդ Հայաստանն է՝ Վասպուրական, Դվին, Շիրակ Տայք (Սիրաջ Թայր), Բագրևանդ և Նախճավան:

Չորրորդ Հայաստանն է՝ Շիմշաթ, Ուլաթ, Կարնո քաղաքը (Կալիկալա), Արճնշ և Ապահունիք (Բահունայս, Բաջունայս):

Առան, Վիրք և Սիսական նահանգները խաղարաց թագավորության մեջ էին, իսկ Դվին, Նախճավան, Շիրակ, Բադրևանդ, Ուլաթ և Ապահունիս նահանգները՝ Հոռոմոց թագավորության մեջ և պարսիկները նվաճեցին այն մինչև Շարուանի Հողը, որտեղ կա Մովսեսի ժայռը և նրա մեջ Այն (ակունք) ալ-Հայուան:

Շիմշաթում կա Սաֆուան իրն Մուաթթալ ալ-Ատլամիի՝ Ալլահի առաքյալի բարեկամի գերեզմանը: Նրա (Շիմշաթի) և Հիսն Ջիլադի (Ուարերդ) միջև փոքր Հեռավորություն կա: Նրա վրա կա մի ծառ, որի էությունը ոչ ոք չգիտի: Նրա պտուղը նշի նման է և կեղևով է ուտվում ու մեղրից քաղցր է:

Կավաղը (Կուբադ) կառուցեց Փայտակարան (Բայլական), Պարտավ և Կապադակ քաղաքները, ինչպես նաև Սուղդ ալ-Լաբինը (աղյուսն պատնեշ): Անուշիրուանը կառուցեց Շապորան (Շաբուբան), Քարքարա և Դաբբանդ քաղաքները, իսկ Դաբբանդը բաղկացած է պալատներից (ամրոցների), որոնք լեռնային ճանապարհի վրա են կառուցված և երեք հարյուր վաթսուն հատ են: Նա կառուցեց Բալանջարը և Աամանգարը: Վրաց երկրում կառուցեց Սուղդարիլ քաղաքը և այնտեղ ևս իր պալատը կառուցեց ու կոչեց Պերոզապատի դուռ (Բաբ Ֆիրուզ Կուբադ):

Հայաստանում են նաև Ոռյը, Ծանարքը (Սաննարիյա), Աղրակը (ալ-Բակ), Քիսալը և Աթխազը, Գարդման (Ջարդաման) բերդը, Ուայգանը, Շաքեն (Շաքի) և Բաբ քաղաքը:

ԱՐՈՒԱՐԸ (ԴԱՐԲԱՆԴ)

Սա բաղկացած է Կովկաս (Կարկ) լեռներում [նղած] կիրճերի անցքերից: Նրանում (Կովկասում) կան բերդեր, ինչպես Սուլի դուռը (բար), Ալանաց (ալ-Լան) գուռը, Շապորանի դուռը, Լազիկայի դուռը, 448

Բարեկալի դուռը, Սամցխի (Սամսախի) դուռը, Սարիբի (գահի) տիրոջ դուռը, Ֆիլան չահի դուռը, Քարունանի դուռը, Թաբարսարան-չահի դուռը, Լիրանչահի դուռը, Լիրանչահի դուռը, Անուշիրուանի դուռը: Սամանդար քաղաքը Դարբանդից այն կողմ է, իսկ ինչ նրանից հետո է գալիս, խազարների ձևովում է: Մովսեսի (Մարգարեի) դրույցներում ասվում է. «Հիշում ես, որ ապաստան գտանք ժայռերում, իսկ ես մոռացել էի մեծ ձուկը, որը կենդանացել էր»: Ժայռը Շարուանի ժայռն է, ծովը Գեղանի (Գիլան) ծովն է, իսկ Գյուղը՝ Բաջարուանն է: [Ասված է նաև]. «մինչև որ նրանք պատահել էին մի տղայի (դուլամ) և սպանել նրան խայզան գյուղում» (Ղուրան, ԺԳ, 62):

Հայաստանի (Արմինիա) հարկը չորս միլիոն դիրհամ է:

ՀԱՆԱՊԱՐՀԸ ՎՐԿԱՆԻ (ՋՈՒՐՋԱՆ) ԵՎ ԽԱԶԱՐՆԵՐԻ ՔԱՂԱՔ ԽԱՄԼԻՋԻ ՄԻՋԵՎ

Սա հյուսիսային [քաղաք] է, ուստի նրան հիշեցի այս տեղում: Վրկանից [ճանապարհը] գնում է խամլիջ²⁰, որը գտնվում է սլավոնների երկրից եկող գետի ծայրին և սա թափվում է Վրկանա ծովը, եթե քամին բարեհաջող է՝ ութ օրում: Խազարների քաղաքներն են խամլիջը, Բալանջարը և ալ-Բայդան (սպիտակ): Ասել է Բուհտուրին.

Ազնվականների տիտղոսների վրա, որ Իրաքում էր ստացել

Ավկյացրեց այն, որ ստացել էր խամլիջում կամ Բալանջարում:

Բարից (Գարրանդ) դուրս գտնվում են Սուրի թագավորը, Լազքի թագավորը, Ալանաց թագավորը, Ֆիլանի թագավորը, Մասքթաց (Մասկաթ) թագավորը, Սարիբի տերը և Սամանգար քաղաքը:

Վերջացավ Զարբիի մասին խոսքը, որը հյուսիսային երկիրն է:

ՀԱՐԱՎԸ (ՏԱՅՄԱՆ)

ԼՋ 125

Տայմանը հարավային երկրներն է և կազմում է թագավորություն մեկ քառորդը: Սպահակտը, որն իր ժամանակին կառավարում էր, կրում էր Պերող սպահակտ (Ֆիրուզ իսբահբադ) տիտղոսը:

Գլխահարկը, որ վճարում էին ոչ մահմեդականները Բաղդադում, հասնում էր հարյուր երեսուն հազար դիրհամի, իսկ շուկաների արտադրանքի, ջրաղացների և փողերանոցների [հարկը] հասնում էր մեկ միլիոն հինգ հարյուր հազարի:

[.....]

Վերջացավ Հարավի (Տայման) նկարագրությունը:

ՓՈՍՍԻ ԶԻԵՐԻ ԿԱՑԱՆՆԵՐԸ (ՄԻՔԱՔ) ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Կա ինը Հարյուր երեսուն փոստի ձիերի կայան (սիքքա). իսկ անասունների ծախսը, նրանց գները և փոստի կայանների պետերի ու սուրհանգակների վարձատրությունը տարեկան Հարյուր Հիսունինը Հազար Հարյուր դինար է:

ՌԱԴԱՆԻՑԱ ՀՐԵԱ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ ՃԱՆԱՊԱՐՀԸ

ԼՂ 153-155

Սրանք խոսում են արաբերեն, պարսկերեն, Հունարեն (Հոռոմեն), Փրանսերեն (Փրանկերեն), անդալուսերեն* և սլավոներեն: Ճանապարհորդում են արևելյան կողմերից արևմտյան կողմերը և արևմուտքից՝ արևելք թև՝ ցամաքով, թև՝ ծովի վրա: Արևմուտքից (Մաղրիբ) բերում են ծառաներ (ստրուկներ), աղախիններ, տղաներ (ղուլամ), մետաքսե դիպակ (դիբաջ), նապաստակի մորթի, մուշտակ, սամույր (սամուր) և սրեր: Նավ են նստում Ֆրանկստանից (Ֆիրանջա)՝ Արևմտյան ծովի վրա, իջնում են Ֆարմայում²¹ և իրենց ապրանքները [անասունների] մեջքի վրա բեռնրած փոխադրում են [Կարմիր ծովի] նավահանգիստը՝ [Կուլղում]²², իսկ այս երկուսի միջև քսան փարսախ է: Ապա նավարկում են Կուլզումից Արևելյան ծովի վրա՝ դեպի Զար²³ և Զիդդա (Զուդդա), Հևտո ընթանում են դեպի Սինդ, Հնդկաստան և Չինաստան:

Իսկ Չինաստանից բերում են մուշկ (միսք), հալվե (ուղ, ալոյ), քաֆուր (քամֆորա), դարսենի (դարչին) և այլ բաներ, որ ընդհանրապես այնտեղից են բերվում, վերադառնում են Կուլղում, ապա կրում տանում են Ֆարմա և նավարկում Արևմտյան ծովի վրա: Երբեմն չուր են գալիս դեպի Կոստանդնուպոլիս և իրենց ապրանքները վաճառում Հոռոմներին, կամ էլ գնում Ֆրանկների թաղավորությունը և այնտեղ վաճառում: Իսկ երբ կամենում են, նորից այլ ապրանքներ Ֆրանկստանից տանում են Արևմտյան ծովի վրա նավարկելով և իջնում Անտիոք, ապա ցամաքով երեք կայան (մարհալա)²⁴ անցնում և Հասնում Զաբիա, ապա Եփրատի վրա նավարկում են մինչև Բաղդադ, Հևտո Տիգրիսի վրա մինչև Ուբուլլա և ապա այնտեղից գնում

* Ոոսքը վերաբերում է Իբերական թերակղզում խոսված ժողովրդական լատիներենին, որից Հետագայում առաջացավ իսպաներենը:

Օման, Սինդ, Հնդկաստան ու Զինաստան: Այս բոլորը իրար հետ չադկասոված է:

ՌՈՒՍ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ ՈՒՂԻՆ

Սրանք սլավոնների մի ցեղ են: Նրանք տանում են նապաստակի մորթի, սև աղվեսի մորթի և սրեր Սլավոնների երկրի հեռավոր ծայրերից մինչև Ռուսի (Հոռոմոց) ծովը: Ռուսի (Բյուզանդիայի) տերը նրանցից տասանորդ է վերցնում: Երբ դնում են Տանիսի (Տանաիս, Դոն)՝ սլավոնների գետի վրայով, անցնում են Ուամլիջով, որը խաղաղաց քաղաքն է, սրա տերը նույնպես տասանորդ է վերցնում: Ապա գնում են Վրկանա ծով և իրենց ցանկացած ափը դուրս են դալիս: Այս ծովի տրամագիծը հինգ հարյուր փարսալս է: Երբեմն իրենց ապրանքները Վրկանից ուղտերին բարձած տանում են Բաղդադ: Նրանց համար թարգմանում են սլավոն ծառաները և քրիստոնյա ձեռնալով զլխահարկ են վճարում:

[ՀՐԵԱՆԵՐԻ] ՑԱՄԱՔԱՑԻՆ ԺԱՆԱՊԱՐՀԸ

Նրանք, երբ ճանապարհ են ընկնում, սկսում են Իսպանիայից և կամ Ֆրանկստանից (Ֆրանսիայից), ապա անցնում [Մարոկկոյի] Հեռավոր Սուր և հասնում Տանժեր (Թանջա), ապա Իֆրիկիա (Թունիս), Եգիպտոս, Ռամլա, Դամասկոս, Բուֆա, Բաղդադ, Բասրա, Ահուազ, Ֆարս, Բիրման, Սինդ, Հնդկաստան, ապա Զինաստան: Երբեմն վերցնում են Հոռոմից (Ռումիյա) վերևի ճանապարհը դեպի սլավոնների երկիրը, ապա հասնում խաղաղաց քաղաք Ուամլիջ, հետո Վրկանա ծովով դալիս են Բալլս և Մավարաննահր, ապա Տուղուզդուրի յուրթը (Ուրուա) և Զինաստան:

ԲՆԱԿԵԼԻ (ՇԵՆ) ԵՐԿԻՐԸ ԲԱԺԱՆՎԱԾ Է ԶՈՐՍ ՄԱՍԻ

Նախ՝ Եվրոպա (Արուֆա), որի մեջ են Իսպանիան (Անդալուս), Սլավոնները (Սակալիբ), Հոռոմները (Ռում), Ֆրանկները (Ֆիրանջա) և Տանժերից (Թանջա) մինչև Եգիպտոսի սահմանները:

Ապա Լիբիա (Լուբիա), որի մեջ են Եգիպտոսը (Միսր), Կուլզումը, Հաբեշտանը (Հարաշա), բերբերները և նրանցից այն կողմ ու Հարավային ծովը: Այս երկրներում չկա ցամաքային խոզ, եղնիկ, ափանակ և այծ:

Եթովպիա (Իտիուֆիա), որի մեջ են Տիհաման, Եմենը (Յաման), Սինդը, Հնդկաստանը (Հինդ) և Զինաստանը (Սին):

Եվ Սկիթիա (Ասկուտիա), որի մեջ են Հայաստանը, Նորասանը, Թուրքերը և խազարները:

ԳՈԳԻ (ՅԱՋՈՒՋ) ԵՎ ՄԱԳՈԳԻ (ՄԱՋՈՒՋ) ԱՄԲԱՐՏԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ինձ պատմել է Թարգման Աալլամը, թե Վասիկ Բիլլահ [խալիֆան] երբ երազում տեսավ, որ Երկկոտոշավորի (Ալեքսանդր Մակեդոնացու), մեր և Գոգի ու Մագոգի միջև կառուցած ամբարտակը փլվել է. պահանջեց մեկին, որպեսզի այնտեղ ուղարկի ստույգ լուրեր բերելու: Ասել է Աչնասը [խալիֆային], այստեղ ուրիշ հարմար անձ չկա, բացի Թարգման Սալլամից, որը երեսուն լեզվով է խոսում: Պատմել է [Թարգմանը], ինձ կանչեց Վասիկը և ասաց՝ կամենում եմ, որ գնաս ամբարտակի մոտ և ստուգես ու ինձ լուրեր բերես: Նա ինձ կցեց Հիսուն հոգու, երիտասարդ և ուժեղ, հատկացրեց Հինգ հազար դինար և ինձ, որպես հատուցում, տվեց տաս հազար դիրհեմ, իսկ Հիսուն մարդուց ամեն մեկին հրամայեց տալ հազար գիրհեմ և մեկ տարվա ապրուստ: Մարզկանց համար պատրաստել տվեց Թադիբե գլխարկներ կաշիով ծածկված: Նրանց (ձիերի) համար պատրաստվեցին մուշտակե լանջափոկեր (թամբի փոկեր) և փայտե ասպանդակներ: Ինձ տվեց երկու հարյուր ջորի՝ կրելու համար ուտեստեղենը և ջուրը:

Սամառայից դուրս եկանք ու Վասիկի նամակով ներկայացանք Հայաստանի տեր Իսհակ իբն Իսմաիլին²⁶, որը Տիգրիսում էր: Իսհակը մեր մասին գրեց Սարիրի տիրոջը, իսկ Սարիրի տերը գրեց Ալանաց Թագավորին, Ալանաց Թագավորը գրեց Ֆիլան շահին, իսկ Ֆիլան շահը գրեց Նաղարաց Թագավոր Թարխանին: Նաղարաց Թագավորի մոտ մնացինք մեկ օր և մեկ գիշեր: Նա մեզ հետ ուղարկեց Հինգ ուղեցնների:

Նրանից բաժանվելուց հետո քսանվեց օր գնացինք, մինչև որ հասանք մի սև հող՝ լի գարջահոտությամբ: Սակայն մենք նախապես քացախ էին պատրաստել, որպեսզի գարջելի հոտը չառնելու համար հոտոտենք: Այսպես քայլեցինք տաս օր: Ապա հասանք ավերակ քաղաքներ և քսան օր քայլելուց հետո հարցրեցինք այդ քաղաքների վիճակի մասին: Մեղ տեղեկացրին, որ դրանք այն քաղաքներն են, ուր Գոգն ու Մագոգը մտել ու կործանել էին:

Ապա գնացինք բերդերը, այն լեռան մոտ, որի կիրճերից մեկում կար ամբարտակը: Այդ բերդերում ապրում էին մարդիկ, որ խոսում էին արաբերեն ու պարսկերեն, մահմեդականներ էին, որոնք կարգում էին Ղուրանը, ունեին դպրոցներ ու մզկիթներ: Հարցրեցին մեզ. թե որտեղից ենք: Հայտնեցինք թե հավատացելուց իշխանի ղեսպաններն ենք: Սկսեցին զարմանալ ու ասել՝ հավատացելուց իշխա՞ն: Ասացինք՝

այո: Հարցրեցին՝ ձե՞ր է, թե՛ Երիտասարդ: Ասացինք՝ Երիտասարդ և նրանք դարձանալով Հարցրեցին՝ որտե՞ղ է լինում: Ասացինք՝ Իրարում, այն քաղաքում, որը կոչվում է Ասմառա: Ասացին բոլորովին չենք լսել: [.....]:

Վերադարձանք Սասմառա և ես մտա Վասիկ ([սալիֆայի] մոտ ու տեղեկացրի պատմությունը [թե՛ կանգուն է ամբարտակը] և ցույց տվեցի այն երկաթի կտորը, որ պոկել էի [քերդի] դռնից: Նա փառք տվեց Ալյահին, Հրամայեց նվերներ տալ և բաշխեց ամեն մարդու հաղար դինար: Ամբարտակը հասել էինք տասնվեց ամսում և այնտեղից վերադարձել տասներկու ամսից ու մի քանի օրից:

ԼԵՌՆԵՐԻ ՀՐԱՇԱԼԻՔՆԵՐԻՑ

ԼՂ 172-173

Մեքքայի ու Մադինայի միջև գտնվող Սըջ լեռը (լեռնաշղթան) հասնում է Ասորիք, մինչև որ կցվում է Լիբանանին Եմեսայի կողմից, իսկ Սանիրին՝ Դամասկոսի կողմից: Ապա անցնում է և միանում Անտիոքին ու Մամեստիայի լեռներին, որոնք կոչվում են ալ-Լուքքամ, հետո կցվում է Մալաթիայի, Շիմշաթի ու Կարնո քաղաքի լեռներին՝ մինչև Ուղարաց ծովը, որի վրա է Բաբ ալ-Աբուլաբը (Դարբանդ) և այստեղ կոչվում է Կովկաս (Կարկ):

ԳԼՈՒԽ ԳԵՏԵՐԻ ԱԿՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԼՂ 173-175

Եփրատի ակունքը Կարնո քաղաքի մոտից է²⁶, անցնում է Ռումի երկրով և սնվում է շատ աղբյուրներից: Նրա մեջ է թափվում Արածանին (Արսանաս)՝ Շիմշաթի դետը: Նա հասնում է Կամախ և Մալաթիայից երկու մղոն հեռավորության վրա հոսելով հասնում է Զարալատա և ապա՝ Ասմոսատ: Այստեղից տանում է նավերը և լաստերը ու հասնում Սավադ (Ստորին Միջագետք): Նրանից դետեր են ճյուղավորվում Բաղդադի Սավագում (սեահողում) և թափվում Տիգրիս: Նրա մի մասն անցնում է դեպի Քուֆա, ճեղքում է Սավադը, ապա թափվում Տիգրիս Մադաինից (Տիգրոն) ներքև:

Տիգրիսի ակունքը Ամիդի լեռներից է և անցնում է Սալսալայի լեռներից²⁷ և սնվում Հայաստանի կողմերից եկող բաղում աղբյուրներից: Ապա անցնում է Բալադ և այնտեղից տանում բեռնավորված նավերն ու լաստերը: Սնվում է երկու Զարերից, Նահրավանից և երկու Սարատներից և թափվում Բաթաիհի (ճահճուտ) մեջ, ապա

Թափվում է Ուրուլլայի Տիգրիսը և վերջապես Արևելյան ծովը²⁸:

Հայաստանի գետ Արաքսի (ալ-Ռաս) ակունքը Կարնո քաղաքում է, անցնում է Առանով և նրա մեջ թափվում է Առան գետը²⁹, ապա անցնում է Վարդանակերտով, մինչև որ հասնում է երկու ջրերի (ծովերի)՝ [Արաքսի ու Կուրի] միախառնման վայրին, որը հիշել է Ալլահը: Այստեղ միանում են այն (Արաքսը) և Կուրը և երկուսի միջև Փայտակարան (Բայլական) քաղաքը կա, ապա միացած անցնում են, մինչև որ թափվեն Վրկանա ծովը:

Երկու Ջարերի ակունքները Հայաստանի լեռներում են և թափվում են Տիգրիսի մեջ: Մեծ Ջաբը թափվում է Հագիսայի մոտ, իսկ Փոքրը՝ Սինի մոտ: Ասել է Իրն Մուֆարրիդը.

Նա, որ ապրել էր իր խղճին դավաճանելով

Մեռավ Ալլահից սպանված ստրուկի նման Ջարում:

Նահրաբանի³⁰ ակունքը Հայաստանի լեռներում է, անցնում է Բար Սալվայի մոտով և այնտեղ կոչվում է Տամառա, սնվում է Կավաթիլից և երբ հասնում է Բաջիսրա, կոչվում է ալ-Նահրավան: Տիգրիս է թափվում Ջարբուլից ներքև:

Էջ 178

Սարախսի գետերի ջրերի աղբյուրը ակունքներից է և Նիչապուրի, Ռեյի ու Իրաքի գետերը, մինչև անապատի սահմանը (Կագիսիայից այն կողմ մեկ կայան) հոսում են արևմուտքից արևելք, ինչպես Հուլուանի գետը, Արդաբիլի գետը, Դվինի գետը³¹ և Նահրավան գետը, Տիգրիսն ու Եփրատը և բոլոր նրանց վտակները: